



ՄԱԹԵՄԱՏԻԿԱ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐ

Հանրակրթական ուսումնական հաստատությունների առաջին դասարանի սովորողների համար

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ:

Բովանդակության համար պատասխանատվություն է կրում

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի
Եվրոպական միության տեսակետները:

Երևան

Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն
2021

ՀՏԴ 51(07)
ԳՄԴ 22.1g7
Բ 371

Բարսեղյան Մ.Ս., Սվաջյան Ա.Հ.

Բ 371 Մաթեմատիկա 1: Աշխատանքային գիրք-տետր / Մ.Ս. Բարսեղյան, Ա.Հ. Սվաջյան;
Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն.- Եր.: Ասողիկ, 2021.- 48 էջ:

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել ՀՀ ԿԳՄՍ
նախարարության կողմից

Աշխատանքային գիրք-տետրը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան
հայկական պետական մանկավարժական համալսարանի հատուկ և ներառական
կրթության ֆակուլտետի գիտական խորհրդի կողմից

Գրախոսներ՝ մ.գ.թ., դոցենտ Ազատյան Թ.Յու.

մ.գ.թ., դոցենտ Հովհաննիսյան Ք.Ա.

Հեղինակներ՝

Բարսեղյան Մ.Ս.

Սվաջյան Ա.Հ., մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Խմբագիր՝ Օհանյան Հ.Վ.

Համակարգչային ձևավորում՝ Ստեփանյան Ա.Ռ.

Նկարագրողում՝ Մնացականյան Կ.Բ.

Ստեփանյան Ա.Ռ.

ՀՏԴ 51(07)
ԳՄԴ 22.1g7

Սույն աշխատանքային գիրք-տետրի նպատակը հանրակրթական ուսումնական
հաստատությունների առաջին դասարանի կրթության առանձնահատուկ պայմանների
կարիք ունեցող սովորողներին «Մաթեմատիկա» առարկայի նախաթվային շրջանի
ուսումնառության ընթացքում լրացուցիչ, առավել պարզեցված և հարմարեցված
ուսումնական նյութերի տրամադրում է:

Տպաքանակ՝ 80 օրինակ

ISBN 978-9939-50-482-7

© Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2021

Նախաբան

Մաթեմատիկայի աշխատանքային գիրք-տետրը կազմված է հանրակրթական դպրոցի 1-ին դասարանի «Մաթեմատիկա» առարկայական չափորոշչին և ծրագրին համապատասխան՝ հարմարեցված կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների ուսուցման և ուսումնառության առանձնահատկություններին և ներառում է ծրագրային նախաթվային փուլը (առարկայի հատկանիշ, համեմատել ըստ երկարության, զանգվածի, տարածության մեջ կողմնորոշում և այլն): Աշխատանքային գիրք-տետրում հաշվի են առնվել սովորողների մաթեմատիկական գիտելիքների և կարողությունների ձևավորման ժամանակակից մոտեցումները, որոնց հիմքում ընկած է ուսուցման զարգացնող ուղղվածության սկզբունքը:

Ուսումնական առաջադրանքների համակարգը ներկայացված է պարզից բարդ սկզբունքի տրամաբանական հաջորդականությամբ: Նոր նյութը ներմուծվում է փոքր բաժիններով՝ քայլ առ քայլ, աստիճանաբար նոր տարրեր ավելացնելով՝ հաշվի առնելով այն դժվարությունները, որոնց հանդիպում է առաջին դասարանցին:

Առաջադրանքները ներկայացվում են հստակ և հակիրճ ձևակերպումներով, որոնք կազմվել են սովորողին կողմնորոշող ցուցումներով: Այդ տեքստ-ցուցումները պետք է ընթերցվեն և բացատրվեն սովորողին ուսուցչի կողմից, քանի որ տվյալ ժամանակահատվածում առաջին դասարանցին դեռևս տառաճանաչ չէ և չի տիրապետում ինքնուրույն ընթերցման կարողություններին: Առաջարկվել են այնպիսի առաջադրանքներ, որոնք աշակերտից պահանջում են ինտերակտիվ գործունեություն ծավալել՝ կտրել, փակցնել, կառուցել: Այս ամենն իրագործելու համար գիրք-տետրն ունի հավելվածային բաժին, որտեղ նման առաջադրանքներից յուրաքանչյուրի համար առաձևացված է համապատասխան գործիքակազմ, ինչից կօգտվի աշակերտը և կիրականացնի առաջադրանքի նման կատարումը:

Կրտսեր դպրոցականի մաթեմատիկական պատկերացումների, հասկացությունների և կարողությունների ձևավորման համար ուսումնական գործընթացն անհրաժեշտ է կազմակերպել զննագործական միջոցների գործադրմամբ: Որպես պարտադիր դիդակտիկ նյութ կիրառվում են երկրաչափական պատկերներ ու մարմիններ (շրջան, քառակուսի, եռանկյունի, ուղղանկյուն, գունդ, խորանարդ), ինչպես նաև՝ հաշվեճողիկներ: Այս նկատառումից ելնելով տետրում ընդգրկվել են այնպիսի առաջադրանքներ, որոնց առարկայական-գործնական կիրառումներն իրականացվում են վերոնշյալ դիդակտիկ նյութերով: Առաջադրանքներում ներկայացված են նաև կենցաղային ծանոթ թեմատիկ առարկաներ, խաղալիքներ, միրգ, բանջարեղեն և այլն:


Գործնական բնույթի առաջադրանքների համակարգը, որն ունի ընդգծված ուսուցողական ուղղվածություն, թույլ է տալիս առավել արդյունավետ կազմակերպել սովորողների ինքնուրույն աշխատանքն ինչպես դասարանում, այնպես էլ արտադասարանային պարապմունքների ժամանակ՝ ստացված մաթեմատիկական գիտելիքների ամրապնդման և սովորողների ընդհանուր զարգացվածության նպատակով:

Հարկ է նշել, որ ներկայացվող ուսումնառական նյութին կից առկա է մեթոդական ձեռնարկ, որը կօգնի մանկավարժին յուրաքանչյուր առաջադրանքի ուղղորդման գործընթացում:


Գիրք-տետրը պատկերազարդ է և գունագեղ, որն առավել կիսթանի սովորողի հետաքրքրությունն ու հաճելի կդարձնի նրա ուսումնառության մեկնարկը մաթեմատիկայի աշխարհում:

Առարկայի հատկանիշ Գույն




1. Գնդիկի գույնին համաձայն միացրու՝ համապատասխան գույնով պատկերը:








2. Ճանաչիր յուրաքանչյուր խաղալիքը: Սլաքներով համապատասխանեցրու՝ յուրաքանչյուրին իր զույգը և ներկիր այն նույն գույնով:








3. Անվանիր քեզ ծանոթ յուրաքանչյուր առարկա: Ինչ գույնի են դրանք: Նկարագրիր ինչի համար են նրանցից յուրաքանչյուրն անհրաժեշտ:






4. Ինչ մրգեր են նկարված: Տու՛ր նրանց անվանումները: Ներկիր դրանք քո նախընտրած գույնով (տես հավելված 1):



5. Ինչ բանջարեղենի տեսակներ են պատկերված: Տու՛ր նրանց անվանումները և ներկիր համապատասխան գույներով (տես հավելված 2):



6. Ստորև տրված պատկերներին տու՛ր մեկ անվանում և ներկիր քո նախընտրած գույներով:







7. Շարունակիր:


•		•		•															
—		—		—															



Առարկայի հատկանիշ Ձև: Չափ: Շրջան


8. Անվանիր յուրաքանչյուր գույնը և ըստ դրանց դասավորվածության հաջորդականության ներկիր շրջանները:




9. Տրված պատկերներից որո՞նք ունեն շրջանի տեսք, անվանիր դրանք ու լրացրու՝ աղյուսակը հետևյալ կերպ:




	
	
	
	


10. Միացրու՝ կետերը, ստացիր շրջան: Ներկիր կարմիր գույնով:




11. Միացրու՝ կետերը: Ինչ ստացար: Ներկիր կապույտ գույնով:




12. Օգտագործիր շրջանի նմուշ: Գծիր շրջան և ներկիր կանաչ գույնով:



13. Յուրաքանչյուր բաժակին ամրացրու՝ համապատասխան գույնով շրջան (տե՛ս հավելված 3):







14. Ընտրիր նրա համապատասխան գույնը: Պատրաստիր արջուկին (տե՛ս հավելված 4):




Մեծ-փոքր


15. Հետևելով օրինակին՝ գունավորի՛ր վանդակները մեծ պատկերին համապատասխանողը՝ կապույտ, փոքրը՝ կարմիր գույնով:




16. Նկարի՛ր շրջանները մեծից փոքր հաջորդականությամբ:




17. Կտրի՛ր և փակցրո՛ւ շրջանները փոքրից մեծ հաջորդականությամբ (տե՛ս հավելված 5):



18. Յուրաքանչյուր խմբում տու՛ր մրգի անունը: Մեծը ներկիր կարմիր գույնով, իսկ փոքրը՝ կանաչ գույնով:



19. Գծիկով միացրու՛ մեծ պատկերը համապատասխան փոքրին՝ կազմելով զույգ:




20. Շարունակի՛ր.


\		/		\		/													
• \		• \		• \															

Միանման, հավասար ըստ չափսերի, նույնքան


21. Գտիր միանման առարկաները և միացրու՝ իրար:




22. Միացրու՝ նույն գույնի հագուստներն իրար:







23. Միացրու՝ հավասար չափսերով փղերին իրար:




24. Միացրու՝ նույն չափսի շրջանները:





25. Միմյանց միացրու՝ միանման, այնուհետև՝ ոչ միանման պատկերները:




26. Գծիր այնքան գծիկ, որքան հատապտուղ կա յուրաքանչյուր նկարում:








27. Նայի՛ր և շարունակիր լրացնել նկարները:




Տակ, վրա, մեջ


28. Ներկիր սեղանի վրա ցույց տվող կենդանու վանդակը կանաչ գույնով, կապույտով՝ տակը ցույց տվող կենդանու վանդակը, դեղինով՝ մեջը ցույց տվողին:






29. Նշիր իր պատկերն է սեղանի վրա: ☒



30. Նշիր իր պատկերն է սեղանի տակ: ☒



31. Նշիր ի՞նչ պատկերն է տուփի մեջ: ☒


☐

☐

☐

32. Նշիր որտեղ է գտնվում շնիկը: ☒


☐


Տակ

☐

Վրա

☐

Մեջ


☐

Տակ

☐

Վրա

☐

Մեջ


☐

Տակ

☐


Վրա

☐


Մեջ

Աջ, ձախ


33. Ներկիր ձախ ձեռքը ցույց տվող վանդակը կապույտ գույնով, իսկ աջ ձեռքը՝ կարմիրով:




34. Ներկիր ձախ ոտքը ցույց տվող վանդակը կանաչ գույնով, իսկ աջ ոտքը՝ դեղինով:











35. Ներկիր աջ և ձախ սլաքներն ըստ նմուշի:





36. Աջ կողմի բուին ներկիր դեղին, իսկ ձախ կողմինին՝ կարմիր գույնով:










37. Նշիր վանդակում, թե որ կենդանին, որ ուղղությամբ է նայում:





38. Նշիր վանդակում, թե շնիկը ի՞նչ ուղղությամբ է նայում:



39. Մեքենայի ուղղությանը համապատասխան ընտրիր սլաքը:




40. Տեղադրիր պատկերները համապատասխան սյունակներում (տես հավելված 6):

	
---	---




Մեջտեղում, միջև

41. Աղյուսակում նշիր առարկաների ճիշտ դիրքերը: ☒






		☒	
			
			







42. Նշիր ի՞նչ միրգն է գտնվում ձախ կողմում: ☒


☐

☐

☐




43. Նշիր իր միրգն է գտնվում աջ կողմում: ☒

☐☐☐



44. Նշիր իր միրգն է գտնվում մեջտեղում(միջև): ☒

☐☐☐☐☐☐

45. Ո՞ր պատկերներն են գտնվում շան և ճուտիկի միջև:


☐
☐
☐
☐

46. Ո՞ր պատկերն է գտնվում մեքենայից դեպի աջ:



☐
☐
☐
☐

47. Պատկերները դասավորիր այնպես, որ փիղը գտնվի ճուտիկի և մեքենայի միջև (մեջտեղում) (տես հավելված 7):


48. Պատկերները դասավորիր այնպես, որ մեքենան գտնվի ճուտիկի և փղի միջև (մեջտեղում) (Տես հավելված 8):


Քառակուսի


49. Անվանիր յուրաքանչյուր գույնը և ըստ դրանց դասավորվածության հաջորդականության ներկիր քառակուսիները:




50. Տրված պատկերներից որո՞նք ունեն քառակուսու տեսք, անվանիր դրանք ու լրացրո՛ւ աղյուսակը հետևյալ կերպ:




	
	
	
	


51. Միացրու՝ կետերը, ստացիր քառակուսի: Ներկիր կարմիր գույնով:




52. Միացրու՝ կետերը: Ի՞նչ պատկեր ստացար: Ներկիր կապույտ գույնով:



53. Օգտագործիր քառակուսու նմուշ: Գծիր քառակուսի և ներկիր կանաչ գույնով:



54. Շրջանի աջ կողմում նկարիր մեծ կարմիր քառակուսի, իսկ ձախ կողմում՝ փոքր կապույտ քառակուսի:




55. Տրված պատկերները դասավորիր համապատասխան սյունակում (տես հավելված 9):




--	--

56. Կառուցիր բեռնատար ավտոմեքենա՝ օգտագործելով շրջան և քառակուսի պատկերները (տես հավելված 10):




Երկար, կարճ

57. Ներկիր երկար ժապավենը կապույտ գույնով, իսկ կարճը՝ կարմիրով:




58. Նշիր ի՞նչ է ավելի երկարը: ☒




59. Նշիր ի՞նչ է ավելի կարճը: ☒


Հավելվածից կտրիր պատկերների երկարությամբ համապատասխան գույնով շերտեր և փակցրու (տես հավելված 11):




60. Նշիր ամենակարճը: ☒




61. Նշիր ամենատեղիքը: ☒





62. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշիր ամենակարճից մինչև ամենատեղիքը պատկերները:



63. Սլաքներով ժապավենները միացրո՛ւ՝ ամենակարճից դեպի ամենաերկարը:




64. Գծիր տրված հատվածից ավելի երկար հատված:



65. Գծիր տրված հատվածից ավելի կարճ հատված:




66. Նախ համեմատիր, ապա հավասարեցրու՝ կարմիր վանդակների քանակը կապույտին:




Եռանկյունի


67. Անվանիր յուրաքանչյուր գույնը և ըստ դրանց դասավորվածության հաջորդականության ներկիր եռանկյունիները:




68. Գտիր եռանկյունիները և ներկիր դրանք:





69. Նկարներում գտիր եռանկյունիները և ներկիր դրանք:



70.




71. Կառուցիր պատկերները (տե՛ս հավելված 12):




Բարձր, ցածր

72. Ներկիր բարձր ծառը ցույց տվող վանդակը կանաչ, իսկ ցածրը՝ կարմիրով գույնով:
Հավելվածից ընտրել համապատասխան չափի ծառը և փակցնել (տես հավելված 13):




բարձր	ցածր


73. Յուրաքանչյուր զույգից նշիր բարձրը ☒ (տեսն հավելված 14):




74. Յուրաքանչյուր զույգից նշիր ցածրը: ☒



75. Յուրաքանչյուր խմբում նշիր ամենաբարձրին: ☒




76. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշիր ամենացածրից մինչև ամենաբարձր պատկերը:



77. Կտրիր նկարները և փակցրու՝ համապատասխան սյունյակներում՝ բարձրից ցածր հաջորդականությամբ (տես հավելված 15):


կենդանիներ	բույսեր	թռչուններ

78. Շարունակի՜ր և ստացի՜ր եղևնին՝ բարձրից ցածր:




Լայն, նեղ


79. Ներկի՜ր լայն շերտը ցույց տվող վանդակը կապույտ գույնով, իսկ նեղը՝ կարմիրով:




80. Ներկի՜ր ժապավենները համապատասխան գույներով՝ կատարելով մեկնաբանություն:
(Մեկնաբանություն՝ կապույտ ներկված ժապավենը նեղ է կարմիր ժապավենից և հակառակը:)



81. Յուրաքանչյուր զույգ պատկերներից նշիր լայնը: ☒



82. Յուրաքանչյուր զույգ պատկերներից նշիր նեղը: ☒



83. Գործնական առաջադրանք. թղթի շերտից կտրիր լայն և նեղ շերտեր՝ ըստ նմուշի:



Պատրաստիր օղակներ (տես հավելված 16):

(Վանդակավոր թղթի շերտից կտրել լայն և նեղ շերտեր և ստանալ օղակներ: Օղակները կցել իրար լայն-նեղ հաջորդականությամբ: Կարելի է օգտագործել նաև գունավոր թղթի շերտեր):






[illegible][illegible]

Ուղղանկյուն


84. Անվանիր յուրաքանչյուր գույնը և ըստ դրանց դասավորվածության հաջորդականության ներկիր ուղղանկյունները:





85. Ներկիր ուղղանկյան տեսք ունեցող պատկերները քո նախընտրած գույներով:




86. Ներկիր ուղղանկյունները: Միացնելով ուղղանկյունները՝ օգնիր մեղվին հասնել ծաղկին:



87.

Ներկիր 	Ուրվագծիր 
Միացրու՝ և ստացիր 	Գծիր ուղղանկյուն

88. Կառուցիր գնացքը (տես հավելված 17):




Հաստ, բարակ


89. Ներկիր հաստ շերտը ցույց տվող վանդակը կարմիր գույնով, իսկ բարակը՝ կապույտով:




90. Կարմիր գույնով ներկիր հաստ, կապույտով՝ բարակ պատկերները: Հավելվածից կտրիր համապատասխան շերտեր և համապատասխանեցրու նմուշներին (տես հավելված 18):




91. Տվյալ պատկերներից ընտրիր հաստը: Հավելվածից կտրիր շերտեր և համապատասխանեցրու նմուշներին (տես հավելված 19):



92. Տվյալ զույգից ընտրիր բարակը:






93. Շարունակիր և գծիր ավելի հաստ շերտեր:









Ծանր, թեթև

94. Ծանր պատկերների համապատասխան վանդակը ներկիր կապույտ գույնով, իսկ թեթևները՝ կարմիրով:







95. Կենդանիների յուրաքանչյուր զույգից նշիր ավելի թեթևին: ☒









☐☐




96. Նշիր ավելի ծանրը: ☒

☐☐☐☐☐☐


97. Կարմիրով ներկիր ծանր առարկան պատկերող նկարին համապատասխան վանդակը, կապույտով՝ թեթևինը:



98. Գույների հետևյալ հաջորդականությամբ նշիր առարկաները՝ ամենածանրից մինչև ամենաթեթևը:



99. Դասավորիր առարկաները սյունակներում՝ ըստ իրենց ծանրության (տե՛ս հավելված 20):



--	--

